ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԱՍԻՍ 2019թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասիս քաղաքային համայնքի ղեկավարի կողմից 08.01.2019-28.06.2019թթ. կատարված աշխատանքների մասին

Ինչպես հաշվետու, այնպես էլ դրան նախորդող ժամանակահատվածում համայնքային գործունեությունն իրականացվել է Համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրի դրույթներին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ռեսուրսները, զարգացման գերակա ուղղությունները, բյուջետային հնարավորությունները և համայնքի տարեկան աշխատանքային պլանը: Ըստ սահմանված կարգի՝ ամեն շաբաթ կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն, որի ընթացքում լսվել են նրանց հուզող հարցերը և տրվել համապատասխան հանձնարարականներ համայնքապետարանի պատասխանատու աշխատողներին: Համայնքապետի ընդունելությանը մասնակցել է 455 մարդ:

Համայնքի ղեկավարի անունով մշտապես ստացվում են նաև քաղաքացիների դիմումներ, որոնք վերաբերում են հատկապես նրանց սոցիալական հարցերին, որոշ դեպքերում՝ քաղաքաշինական վիճելի խնդիրներին: Ընթացիկ հունվար ամսից մինչև հունիսի 28-ը համայնքապետարանի հասցեով ստացվել է 711 դիմում: Դրանք սահմանված կարգով հասցեագրվել են համապատասխան պատասխանատու աշխատողներին, որոնց տրվել է ընթացք և պատասխանվել դիմումատուներին: Բացի այդ, յուրաքանչյուր շաբաթ աշխատակազմի քարտուղարի մոտ հրավիրված խորհրդակցություններում քննարկվում են նախորդ շաբաթվա հիմնական խնդիրների արդյունքները, ինչպես նաև քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը:

Անցած 6 ամիսների ընթացքում ընդունվել է համայնքապետի 628 որոշում, 36 կարգադրություն, աշխատակազմի քարտուղարի 48 հրաման: Հունվար-հունիս ամիսներին հրավիրվել է համայնքի ավագանու 5 նիստ, ընդունվել է 49 որոշում: Համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կառույցների կողմից 2019թ. հունվար-հունիս ամիսներին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Ֆինանսների բնագավառում

Հարկային եկամուտների 2019թ. առաջին կիսամյակում գանձումները կազմել են 63993.9 հազ. դրամ (52.1%), որից հողի հարկը կազմում է 16547.9 հազ. դրամ (56.0%), այդ թվում գյուղ նշանակության հողի հարկը 3355.8 հազ. դրամ (50.2%), ոչ գյուղ նշանակության հողի հարկը՝ 13192.1 հազ. դրամ (57.6%): Գույքահարկը՝ 47446.0 հազ. դրամ (50.9%), որից իրավաբանական անձանցից՝ 8332.6 հազ. դրամ (61.9%), ֆիզիկական անձանցից (շենք-շինություններ)՝ 9568.9 հազ. դրամ (52.6%), գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 29544.5 հազ. դրամ (48.0%):

Հողի վարձակալությունից գանձումները կազմել են 4725.2 հազ. դրամ (76.3 %), որից ոչ գյուղ նշանակության հողի վարձը կազմել է 4267.6 հազ. դրամ (79.0%), իսկ գյուղ նշանակության հողի վարձը՝ 457.4 հազ. դրամ (57.2%):

Տարածքի վարձակալության վճարը կազմել է 3400.8 հազ. դրամ (52.6%):

(հազ. դրամներով)

	Անվանումը	2019թ. առաջադրանք	2019թ. փաստացի 30.06.2018թ.	Կատարման % 30.06.2019թ.
	Գույքի և հողի հարկեր	**122760.7**	**63993.9**	**52.1%**
	Գույքահարկ, այդ թվում՝	**93196.6**	**47446.0**	**50.9%**
	Ֆիզիկական անձանցից	18186.5	9568.9	52.6%
	Իրավաբանական անձանցից	13450.6	8332.6	61.9%
	Գույքահարկ փոխադրամիջոցներից	61559.5	29544.5	48.0%
	Հողի հարկ, այդ թվում՝	**29564.1**	**16547.9**	**56.0%**
	Գյուղ նշանակության հողեր	6684.1	3355.8	50.2%
	Ոչ գյուղ նշանակության հողեր	22880.0	13192.1	57.6%
	Վարձակալական վճարներ	**12659.5**	**8125.8**	**64.2%**
	Շենքի վարձակալություն	**6464.0**	**3400.8**	**52.6%**
	Վարձով տրվող հողեր	**6195.5**	**4725.2**	**76.3%**
	Գյուղ նշանակության հողեր	800.0	457.4	57.2%
	Ոչ Գյուղ նշանակության հողեր	5395.5	4267.6	79.0%

Առևտրի բնագավառում

Տրվել է՝

1. Ոգելից խմիչքի թույլտվություն ՝ 95 հատ
2. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 86 հատ
3. Բացօթյա վաճառքի թույլտվություն 110մ² (106 օրվա համար)
4. Հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ 6 հատ
5. Արտաքին գովազդի թույլտվություն՝ 31 հատ
6. Տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ 8 հատ
7. Հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ 12 հատ
8. Ժամը 24:00-ից հետո աշխատանքների թույլտվություն՝ 6 հատ

Սոցիալական ոլորտում

1. Թվով 23 . քաղաքացիների տնայցերի արդյունքում տրվել են համապատասխան տեղեկանքներ անձնագրային բաժին և ՍԾՏԳ ներկայացնելու համար,
2. Թվով 12 անապահով ընտանիքների հուղարկավորության կարիքները հոգալու համար տրամադրվել է 430.000 ՀՀ դրամ,
3. Թվով 225 անապահով ընտանիքների դրամական օգնություն է տրամադրվել՝ 4.065.000 ՀՀ դրամ,
4. Թվով 10 անապահով ուսանողի տրվել է 880000 ՀՀ դր. ուսման վարձի փոխհատուցում,
5. Պարբերաբար այցելվել և հսկվել է բարեգործական ճաշարանի աշխատանքը:

Իրավաբանության բնագավառում

1.Մասիսի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում կազմվել է 19 արձանագրություն, որի արդյունքում հինգ անչափահասի նկատմամբ նշանակվել է շեֆ-դաստիարակ, երկու անչափահասի նկատմամբ դադարեցվել են սահմանված շեֆ-դաստիարակի գործառույթները, կազմվել են վեց դատական գործերով արձանագրություններ և եզրակացություններ, մեկ անչափահաս տեղավորվել է ՀՕՖ, մեկ անգործունակի նկատմամբ նշանակվել է խնամակալ, մեկ անչափահասի նկատմամբ խնամակալ նշանակելու խնդրանքը մերժվել է, մեկ երեխայի նկատմամբ շփման կարգ սահմանելու համար առաջարկվել է դիմել դատարան, ծնողական իրավունքներից զրկելու պահանջ է մերժվել, մուրացկանությամբ զբաղվելուն ստիպելու համար դիմել ենք ոստիկանություն:

2. Լիազորագրով՝ որպես ներկայացուցիչ մասնակցել եմ դատական նիստերին:

3. Կնքվել են հողամասի օտարման պայմանագրեր, լուծվել են հողամասի վարձակալության պայմանագրեր:

4.Կազմվել կամ ստուգվել են համայնքի ղեկավարի կարգադրությունների, որոշումների, համայնքի ավագանու որոշումների, աշխատակազմի քարտուղարի հրամանների նախագծեր:

5.Ժառանգություն ստանալու համար բնակիչներին տրամադրվել են 68 տեղեկանքներ:

6.Իրավունքի պետական գրանցում, տեղեկատվություն, ինչպես նաև միասնական տեղեկանք ստանալու համար դիմել ենք ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ Մասիսի սպասարկման գրասենյակ:

7.Վարչական հանձնաժողովի կազմում 19 վարչական վարույթ է իրականացվել, կազմվել են արձանագրություններ, գրություններ, որոշումների նախագծեր:

8.Գույքահարկի ու հողի հարկի չվճարված գումարները գանձելու նպատակով վարչական վարույթ իրականացնելու համար ստեղծված հանձնաժողովի կազմում կազմվել են արձանագրություններ, որոշումների նախագծեր: Գրություններ են ուղարկվել ԴԱՀԿ ծառայությանը գումարի բռնագանձման համար:

9.Վարձակալության վճարները գանձելու և /կամ/ պայմանագրերը լուծելու համար իրականացվել են վարույթներ:

10.Ոստիկանության պահանջով վարել ենք 14 ընտանիքներում կատարված ընտանեկան բռնության գործեր:

Քաղաքաշինության բնագավառում

Տրվել է շինարարության 91 թույլտվություն, ճարտ. հատ. առաջադրանք՝ 92 հատ, քանդման թույլտվություն՝ 4 հատ, ինքնակամ կառույցների օրինականացման թույլտվություն՝ 13 հատ, հասցեավորում՝ 45 հատ, ավարտական ակտերի տրամադրում՝ 34 հատ, գույքային միավորների բաժանման կամ միացման որոշումներ՝ 95 հատ, օտարվող կամ մրցութային կարգով հատկացվող հողերի փաստաթղթերի կազմում՝ 38 միավոր, դիմումների ուսումնասիրություն՝ 500 հատ:

Կրթության և սպորտի բնագավառում

2019 թվականի առաջին կիսամյակը աչքի ընկավ նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպություններում ուսումնակարթական աշխատանքների ակտիվացմամբ:

ՀՀ կրթության տեսչական մարմնի աշխատակիցների կողմից 2019 թվականի մարտի 27-ից իրականացվեցին տեսչական ստուգումներ մանկապարտեզներում, հայտնաբերվեցին խախտումներ, որոնց վերացման նպատակով տրվեցին համապատասխան հանձնարարականներ:

Մանկապարտեզները ակտիվ մասնակցություն ունեցան <<Լավագույն մարզական նախադպրոցական կազմակերպություն>> սպորտլանդիային: Տարածաշրջանային մրցույթում առաջին տեղը զբաղեցրեց թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ-ը:

Ակտիվ էր նաև մարզական կյանքը: Համահայկական 7-րդ ամառային խաղերին ընդառաջ ձևավորվեց Մասիս քաղաքի թիմը: Գարնանը ունեցանք Եվրոպայի առաջնության հաղթողներ:

Համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների կողմից հետևողական աշխատանքներ են իրականացվել տեղերում աշխատանքային և կատարողական կարգապահության բարձրացման ուղղությամբ:

Գյուղատնտեսության բնագավառում

1. Գարնանային գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար ֆերմերային տնտեսություններին տրամադրվել է ազոտական պատրաստանյութ:
2. Պարբերաբար մարզպետարան և Մասիսի վիճակագրական բաժին է ներկայացվել գարնանային բերքահավաքի վերաբերյալ ամփոփ հաշվետվություններ:

3. Ուսումնասիրվել են վերադաս և այլ կազմակերպություններից, ինչպես նաև ազգաբնակչության կողմից ստացված գրություններն ու դիմումները և տրվել են համապատասխան ընթացք:
4. Կազմակերպվել է խորհրդատվություն ,,բուսասանիտարական,, ծառայության մասնագետների հետ համատեղ բուժման, մշակության և այլ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար:
5. Ֆերմերային տնտեսությունները, որոնք մշակում են մորմազգի կուլտուրաներ ՝ դաշտերում տեղադրվել են ֆերոմոնյան թակարդներ հարավամերիկյան ցեցի դեմ պայքարելու համար և պարբերաբար թարմացվել են այդ թակարդները:

Ներքին աուդիտի բաժնի բնագավառ

Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժինը իրականացրել է «Մասիսի քաղաքային համայնքի թիվ 1 մանկապարտեզ» և «Մասիսի քաղաքային համայնքի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներում համակարգի գնահատման աուդիտ, «Մասիսի քաղաքային համայնքի կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ում, Մասիսի համայնքապետարան» ՀԿՀ աշխատակազմի առևտրի, տրանսպորտի և սպասարկման բնագավառ»-ում, «Մասիսի մշակույթի կենտրոն» ՓԲԸ-ում համապատասխանության աուդիտ, որոնց արդյունքները ներկայացվել են քաղաքապետին, ներքին աուդիտի կոմիտեին, լիազոր մարմնին և աուդիտի ենթարկվող միավորին վերջնական հաշվետվության տեսքով:

Վերադասի, լիազոր մարմնի կողմից տրված հանձնարարությունները կատարվել են ժամանակին և արվել են առաջարկություններ: Կազմվել և լիազոր մարմնին է ներկայացվել աուդիտի 2018 թվականի տարեկան հաշվետվությունը:

Կոմունալ տնտեսության բնագավառում

1. Պայմանագրային բոլոր պարտավորությունները կատարվել են բավարար, ինչը հաստատվել է ամենօրյա շրջայցերի արդյունքում:

ա) իրականացվել է վերահսկողություն 2019թ-ի հունվար-հունիս ամիսների ընթացքում նորոգվել են թվով 18 նստարան և 28 աղբարկղ կատարվել են աշխատանքներ քաղաքի գիշերային լուսավորության համակարգի մշտական ու որակով սպասարկման, և ժամանակին վթարների վերացման ուղղությամբ:

2. Կատարվել են այցեր քաղաքացիների դիմումներին, դատարանների հարցումներին պատասխանելու և ճշտումներ կատարելու վերաբերյալ՝ ըստ դիմած հասցեների:

3. Կատարվել է ամենօրյա շրջայց քաղաքի տարածքում աղբահանության, սանմաքրման, կանաչապատ տարածքների խնամման, պահպանման և ոռոգման աշխատանքների վերահսկման նպատակով:

Համայնքի ղեկավար Դ. Համբարձումյան